ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ հրդեհային անվտանգության տեխնիկական ստուգման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 22.02.2019թ. N 89/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.03.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Մ.Կարապետյանը, Լ.Դեմիրչյանը, Ջ.Բաբայանը, Ս.Սարգսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Գնահատող հանձնաժողովի աշխատանքները վերսկսելու և հայտերի գնահատման մասին

-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործունեությունը ժամանակավորապես կասեցրել էր և գնման ընթացակարգի հետագա ընթացքը ապահովելու համար 04.03.2019թ. թիվ-18-2/1804-2019 գրությամբ /կցվում է/ պարզաբանման նպատակով դիմել էր «Էկենգ» ՓԲԸ-ին՝ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Տեխնիկական և Հրդեհային անվտանգության Մասնագիտացված ծառայություն» ՍՊԸ-ի էլեկտրոնային թվային ստորագրության վավերականության վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:
-«Էկենգ» ՓԲԸ-ն պատասխանել է 05.03.2019թ. թիվ-14755-2019 գրությամբ/ կցվում է/:
-Գնահատատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Էկենգ» ՓԲԸ-ի գրությունը՝ որոշեց՝
-«Տեխնիկական և Հրդեհային անվտանգության Մասնագիտացված ծառայություն» ՍՊԸ-ի հայտը՝ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով գնման հրավերի 7.2 կետի համաձայն մերժել, քանի որ մասնակցի կողմից ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին (մասնակիցը փաստաթղթերը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում):
-Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե էլեկտրոնային հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
-Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրա¬մադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյան

Անդամներ՝ Մ.Կարապետյան

Լ.Դեմիրչյան

Ջ.Բաբայան

Ս.Սարգսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան